1

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄՇԴ -1 -2024
ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «23» «01» 2024 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ Պետական մարմին), ի դեմս գլխավոր քարտուղար Հ. Հակոբյանի, որը գործում է պետական մարմնի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամը (այսուհետ՝ Կազմակերպություն), ի դեմս Կազմակերպության տնօրեն Ն. Սարգսյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ կողմեր), հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2323-Ն որոշումը (այսուհետ՝ որոշում)՝ որոշման «1198. Մշակութային և գեղագիտական դաստիարակություն» ծրագրի «11001. Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» միջոցառման (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Սույն պայմանագրով Պետական մարմինը պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով կազմակերպությանը հատկացնել սույն պայմանագրով սահմանված վճարը, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված վճարի դիմաց սույն պայմանագրով սահմանված կարգով ու ժամկետում իրականացնել «Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» ծրագրի կազմակերպումը (այսուհետ՝ միջոցառումներ)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող՝

1.1.1. ծրագրի՝ Հավելված N 1,

1.1.2. նախահաշվի՝ Հավելված N 2,

1.1.3. ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցի՝ Հավելված N 5:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Պետական մարմինն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ (այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարության և պետական այլ մարմինների միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնել ներքին աուդիտ,

2.1.2. Կազմակերպությունից պարբերաբար պահանջել ու ստանալ տեղեկատվություն սույն պայմանագրի կատարման ընթացքի մասին,

2.1.3. սույն պայմանագրով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և կազմակերպությունից

պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.2-րդ կետով նախատեսված տուգանքը, իսկ պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետով նախատեսված տույժերը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. առանց հիմնավոր պատճառի կազմակերպությունը ժամանակին չի սկսում միջացառման իրականացումը, կամ միջոցառման իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (սույն պայմանագրով կամ կանոնադրությամբ միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. կազմակերպության կողմից սույն պայմանագրի պահանջները չկատարելու դեպքում դադարեցնելու ֆինանսավորումը՝ մինչև թերությունների վերացումը,

2.1.6. կազմակերպության կողմից սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների ֆինանսական ծախսեր ենթադրող ոչ ֆինանսական ցուցանիշների թերակատարման դեպքում պահանջելու հետ վերադարձնել համապատասխան չափով հաշվարկած գումարը,

2.1.7. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. պետական մարմնից պահանջելու ընդունել սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները,

2.2.2. պետական մարմնից պահանջելու վերացնել կազմակերպության գործողություններից (անգործությունից) անկախ՝ պետական մարմնի մեղքով սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտները կամ վերանայել սույն պայմանագրի պայմանները,

2.2.3. իրականացված միջոցառումների արդյունքը պետական մարմնի կողմից ընդունվելու և պետական մարմնի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.4. վաղաժամկետ լուծելու սույն պայմանագիրը՝ սույն պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում,

2.2.5. անհրաժեշտության դեպքում սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող նախահաշվով նախատեսված ծախսային ուղղությունների միջև և (կամ) ծախսային

ուղղությունների տողերի միջև իրականացնել համապատասխանաբար յուրաքանչյուր ծախսային ուղղության և ծախսային ուղղության տողերի գումարի 10 տոկոսի չափով շեղում՝ չխախտելով վճարումների համար սահմանված նորմերը:

2.3. Պետական մարմինը պարտավոր է՝

2.3.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և (կամ) ծրագրով նախատեսված դեպքերում իր և կազմակերպության կանոնադրություններով սահմանված իրավասությունների շրջանակներում աջակցել կազմակերպությանը, այդ թվում՝ կազմակերպությանը ցուցաբերել մեթոդական և կազմակերպական օգնություն,

2.3.2. ընդունել սույն պայմանագրի պահանջներին համապատասխան կազմակերպության կողմից պատշաճ ձևով ու կարգով կատարված միջոցառումները և հաշվետվությունները,

2.3.3. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.4. իրականացված միջոցառումների մասին ներկայացված ֆինանսական և բովանդակային հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Հաշվետվություններում թերություններ հայտնաբերվելու դեպքում դրանք վերադարձվում են կազմակերպությանը լրամշակման՝ սահմանելով խելամիտ ժամկետներ: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումները համապատասխանում են ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են,

2.3.5. իրականացնել սույն պայմանագրով նախատեսված այլ աշխատանքներ:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և (կամ) սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով՝ համաձայն սույն պայմանագրի 1.1-ին կետի,

2.4.2. ժամանակին, պատշաճ ձևով ու կարգով կատարել սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված միջոցառումները,

2.4.3. պետական մարմնի պահանջով նրան հաղորդել տեղեկատվություն միջոցառումների կատարման ընթացքի մասին,

2.4.4. սույն պայմանագրով սահմանված պարտավորություններն իրականացնել պետական մարմնի կողմից հաստատված մեթոդական ցուցումների, հրահանգների և այլ իրավական ակտերի (փաստաթղթերի) պահանջներին համապատասխան,

2.4.5. պետական մարմնին անհապաղ հայտնել սույն պայմանագրի կատարման համար առաջացած խոչընդոտների մասին և միաժամանակ ձեռնարկել իր կողմից հնարավոր բոլոր միջոցները՝ դրանք վերացնելու համար,

2.4.6. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել միջոցառումների իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու պետական մարմնի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.7. կատարել պետական մարմնի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.8. սույն պայմանագրի 4.1-ին կետով սահմանված ժամկետներում պետական մարմնին ներկայացնել հաշվետվություններ (ֆինանսական և բովանդակային)կատարված ծախսերի և իրականացված միջոցառումների մասին: Ֆինանսական հաշվետվությունը ներկայացվում է սույն պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված ձևանմուշով՝ նկատի ունենալով, որ փաստացի ծախսերը հիմնավորող հաշվապահական և այլ փաստաթղթերը գտնվում են կազմակերպության մոտ և վերջինս պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար: Բովանդակային հաշվետվությունը ներկայացվում է ամբողջական տեղեկատվություն միջոցառումների իրականացման, հրապարակման և ընթացքի, այդ թվում՝ արդյունքների գնահատման, մասնակիցների քանակի վերաբերյալ, կցելով համապատասխան նյութեր (լուսանկարներ, ազդագրեր, հրավիրատոմսեր, մամուլի հրապարակումներ և այլն, ներառյալ՝ իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում պետական մարմնի (որպես ֆինանսավորող կողմ) վերաբերյալ այլ տեղեկատվական նյութեր)՝ էլեկտրոնային կրիչներով: Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում բովանդակային հաշվետվությամբ ներկայացված տվյալների իսկության համար:

2.4.9. պետական մարմնի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունվելու դեպքում անվճար՝ պետական մարմնի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.10. ծրագրի իրականացման մասին իրազեկման բոլոր հարթակների տեսանելի վայրում (ներառյալ ազդագրերը, հրավիրատոմսերը, մամուլի հրապարակումները և այլն), ինչպես նաև ծրագրի իրականացման մասին իրազեկմանն ուղղված ցանկացած գրավոր և/կամ բանավոր խոսքում հրապարակել պետական մարմնի անունը (որպես ֆինանսավորող կողմ), իսկ համաֆինանսավորման դեպքում՝ պետական մարմնին տրամադրել ամբողջական տեղեկատվություն՝ ծրագրին աջակցող կազմակերպության(ների), ֆինանսավորման չափի և վերջինիս(ներիս) հետ ձեռք բերված այլ պայմանավորվածությունների մասին,

2.4.11. սույն պայմանագրից բխող միջոցառումները չկատարելու դեպքում վերադարձնել պետական մարմնի կողմից տրամադրված գումարը և վճարել տուգանք սույն պայմանագրի 3.1-ին կետում նախատեսված գումարի 5.0 (հինգ) տոկոսի չափով,

2.4.12. իրականացնել միջոցառումների շրջանակներում պետական մարմնի կողմից տրամադրված գումարների հաշվապահական հաշվառման վարում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

2.4.13. միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել Աշխատանքային օրենսգրքով, ինչպես նաև «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով,

2.4.14. սույն պայմանագրով սահմանված միջոցառումների իրականացման արդյունքում առաջացած տնտեսումների, ինչպես նաև չհիմնավորված ծախսերի գումարները վերադարձնել ՀՀ պետական բյուջե՝ ոչ ուշ քան մինչև 2024 թվականի դեկտեմբերի 20-ը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

3.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված միջոցառումների իրականացման համար պետական մարմինը կազմակերպությանը հատկացնում է 31436,2 հազար (երեսունմեկ միլիոն չորս հարյուր երեսունվեց հազար երկու հարյուր) դրամ՝ (ներառյալ հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները)՝ համաձայն Հավելված N 1-ի,

3.2. Սույն պայմանագրի 3.1-ին կետում սահմանված գումարը Կատարողին հատկացվում է սույն պայմանագրի կնքումից հետո՝ համաձայն Հավելված N 5-ի՝ կազմակերպության հաշվեհամարին փոխանցելու միջոցով:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ

4.1. Սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ժամկետը մինչև 2024 թ. դեկտեմբերի 30-ն է, իսկ հաշվետվությունների ներկայացման ժամկետը՝ մինչև սույն պայմանագրով նախատեսված միջոցառումների կատարման ավարտին հաջորդող 30-րդ օրացույցային օրը,

4.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, տարածվում է 2024 թվականի հունվարի 1-ից ծագած իրավահարաբերությունների վրա և գործում է մինչև կողմերի ստանձնած պարտավորությունների ամբողջ ծավալով կատարումը:

5. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Սույն պայմանագրի 1.1-ին կետում նշված և ամբողջությամբ կատարված միջոցառումները կազմակերպության կողմից ներկայացվում են պետական մարմնի ընդունմանը ոչ ուշ, քան սույն պայմանագրով սահմանված ժամկետում: Պետական մարմնի կողմից դրանց ընդունման դեպքում այդ մասին կազմվում է հանձնման-ընդունման արձանագրություն (Հավելված N 4):

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1. Կազմակերպությունը պատասխանատվություն է կրում սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար,

6.2. Սույն պայմանագրի 1.1-ին կետով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման դեպքում, ինչպես նաև սահմանված ժամկետները կազմակերպության կողմից չպահպանելու դեպքում վերջինս պետական մարմնին վճարում է տուգանք՝ ոչ պատշաճ կատարված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով, իսկ սահմանված ժամկետները խախտելու դեպքում ժամկետների խախտմամբ իրականացված պարտավորության համար նախատեսված գումարի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

6.3. Սույն պայմանագրով նախատեսված հաշվետվությունների ներկայացման համար սահմանված ժամկետները չպահպանելու դեպքում կազմակերպությունը պետական մարմնին վճարում է տույժ՝ պայմանագրի գնի 0.05 (զրո ամբողջ

հինգհարյուրերորդական) տոկոսի չափով՝ ուշացված յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար,

6.4. Սույն պայմանագրի 6.2-րդ և 6.3-րդ կետերով նախատեսված տուգանքը և տույժը կարող է հաշվարկվել և հաշվանցվել միջոցառումների իրականացման արդյունքում կազմակերպությանը վճարման ենթակա գումարների հետ,

6.5. Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով,

6.6. Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց,

6.7. Սույն պայմանագրով կազմակերպության կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը պետական մարմինը հրապարակում է իր պաշտոնական կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կազմակերպությունը համարվում է սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Սույն պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը կայքում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև կազմակերպության էլեկտրոնային փոստին,

6.8. Սույն պայմանագրի կնքումից հետո 3-օրյա ժամկետում կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության կողմից դրամաշնորհ ստանալու համար ներկայացված ծրագիրը հրապարակվում են պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում,

6.9. Կազմակերպությունը սույն պայմանագրով նախատեսված ժամկետներում պետական մարմնին ներկայացնում է միջոցառումների կատարման վերաբերյալ հաշվետվություն, որը պետական մարմնի կողմից ընդունվելուց հետո 3-օրյա ժամկետում հրապարակվում է պետական մարմնի պաշտոնական ինտերնետային կայքէջում՝ բացառությամբ անձի եկամուտներին վերաբերող դրամաշնորհային պայմանագրերի:

7. ՄՈՆԻԹՈՐԻՆԳԸ

7.1. Պետական մարմինը միջոցառումների իրականացման արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

7.2. Մոնիթորինգն իրականացվում է պետական մարմնի և (կամ) նրա կողմից լիազորված անձի կողմից,

7.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ,

7.4. Պետական մարմինը ցանկացած ժամանակ կարող է միջոցառումների շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով միջոցառումներին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր,

7.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. Սույն պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են կողմերի կողմից,

9.2. Սույն պայմանագիրը կնքվում է պայմանագրի կողմերի թվին համապատասխան թվով օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ,

9.3. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝	ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն	«Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամ
Երևան, Վ. Սարգսյան 3	Երևան, Սայաթ-Նովայի 1ա
Կառավարական տուն N 2	«ԱԳԲԱ բանկ» ԲԲԸ
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	h/h 220003351925000, հվhh 01563263
h/h 900011032928, հվhh 02698732	Տնօրեն՝
Գլխավոր քարտուղար՝	_____ Ն. Սարգսյան
_____ Հ. Հակոբյան	(ստորագրություն)
(ստորագրություն)	Կ. Տ.
Կ. Տ.	

Հավելված N 1
«23» «01» 2024 թ.
N ՄՇԴ-1 -2024 պայմանագրի

Ծ Ր Ա Գ Ի Ր

Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքների կազմակերպման

1	Կազմակերպության անվանում	«Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամ
2	Կազմակերպության գտնվելու վայր	Երևան, Վարդանանց 18/1
3	Ծրագրի անվանում	Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ
3.1	Բովանդակություն	Ծրագրի շրջանակներում Հիմնադրամի մեթոդիստ-մանկավարժները, ինչպես նաև ՀՀ բարձրագույն, միջին մասնագիտական և արտադպրոցական ուսումնական հաստատությունների առաջատար հրավիրյալ մասնագետները ՀՀ մարզերի և Երևան քաղաքի երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցներում ուսումնական տարվա կտրվածքով՝ I և II կիսամյակների ընթացքում, կիրականացնեն ուսումնամեթոդական և գործնական օգնություն և մանկավարժների դասալսումներ դպրոցների դասատուների և աշակերտների համար: Երևան քաղաքում կանցկացվի դասալսումներ ՀՀ մարզերի արվեստի, պարարվեստի և գեղարվեստի դպրոցների ուսուցիչների համար: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև տեսական առարկաների ստուգարքներ ու վիկտորինաներ, երաժշտական և պարարվեստի փառատոներ, ցուցահանդեսներ, հաշվետու համերգներ և այլն: Հունիս ամսին ք" Երևանում կանցկացվի ՀՀ մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստ դպրոցների սաների հաշվետու համերգ-ցուցահանդեսը: Կիրականացվի «Հանրապետության երաժշտական և արվեստի դպրոցների համար երաժշտական գործիքների ձեռքբերում» ծրագրով ձեռք բերված երաժշտական գործիքների բաշխում և համակարգում, ինչպես նաև 2024թ-ին գնվելիք գործիքների բաշխման համար կկազմակերպվեն լսումներ: Միջոցառման իրականացումը համահունչ է ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի մասին» N 1363-Ա որոշման «4.9 «Մշակույթ» բաժնի դրույթներին:
3.2	Նպատակ	Առաջարկվող ծրագրի նպատակն է մշակութային կրթության ոլորտի զարգացումը, մշակութային կրթության դերի բարձրացումը, մարզում սովորող շնորհալի երեխաների ստեղծագործական ներուժի բացահայտումն ու խթանումը՝ մշտապես ուշադրության կենտրոնում պահելով նրանց մասնագիտական զարգացումը: Ծրագրի շնորհիվ հնարավորություն կընձեռվի մշակութային կրթօջախների սաներին ելույթ ունենալ տարաբնույթ միջոցառումների, մասնակցել միջմարզային փառատոներին, ցուցահանդեսներին՝ ապահովելով նրանց

		գեղագիտական ճաշակի բարձրացումը, կատարողական մակարդակը: Կարևորագույն խնդիրներից է կրթօջախներում դասավանդող մանկավարժների մասնագիտական որակի բարձրացումը, մայրաքաղաքից ժամանած մասնագետների և տեղում աշխատող դասատուների փորձի փոխանակումը, համագործակցությունը:
3.3	Անցկացման ժամկետ	2024թ. հունվար-հուլիս, սեպտեմբեր-դեկտեմբեր
3.4	Անցկացման վայր	ՀՀ մարզերի և ք. Երևանի մշակութի ոլորտում գործող լրացուցիչ, արտադպրոցական կրթություն իրականացնող հաստատություններ
3.5	Ակնկալվող արդյունքներ	Կրթամշակութային համակարգի արդիականացում, մշակութային դաստիարակության ապահովում, հանրապետության քաղաքներում մշակութային կյանքի աշխուժացում ու զարգացում, մշակութային հաստատությունների շնորհալի երեխաների և պատանիների մասնագիտական ունակությունների և ստեղծագործական կարողությունների զարգացում ու խթանում, գեղագիտական ճաշակի ձևավորում, արվեստագետների շփումների սերտացում՝ փորձի փոխանակման միջոցով, միջմարզային մշակութային համագործակցության զարգացում և միասնական մշակութային դաշտի ձևավորում, մարզերի միջև մշակութային կապի ամրապնդում, դասավանդման որակի բարձրացում
3.6	Ոչ ֆինանսական ցուցանիշներ	Հայաստանի Հանրապետությունում գործող 165 երաժշտական, արվեստի, գեղարվեստի և պարարվեստի դպրոցների 3800 աշակերտներին և 720 ուսուցիչներին կցուցաբերվի ուսումնամեթոդական և գործնական աջակցություն: 10 մարզային մեթոդիստ՝ յուրաքանչյուրը 110-120 ժամ (միջինը), 48 հրավիրյալ մասնագետ՝ յուրաքանչյուրը 10-13 ժամ (միջինը), 9 Երևանյան մեթոդիստ՝ յուրաքանչյուրը՝ 120-150 ժամ (միջինը), 10 հաշվետու համերգ ՀՀ մարզերում, 3 երաժշտական փառատոն, 2 պարային փառատոն, 3 ցուցահանդես, 2 տեսական առարկաների ստուգարքներ և վիկտորինաներ, 1 հաշվետու համերգ-ցուցահանդես մարզերի սաների ք. Երևանում: Վերոնշյալ ժամային հաշվարկը իրականացվել է միջինացված սկզբունքով՝ ելնելով մասնագիտության պահանջարկից:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032928, հվhh 02698732
Գլխավոր քարտուղար՝
---------- Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Մշակութային կրթության
աջակցության» հիմնադրամ
Երևան, Սայաթ-Նովայի 1ա
«ԱԳԲԱ բանկ» ԲԲԸ
h/h 220003351925000, հվhh 01563263
Տնօրեն՝
---------- Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 1
«23» «01» 2024 թ
N ՄՇԴ-1 -2024 պայմանագրի

ՆԱԽԱՀԱՇԻՎ

«Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» ծրագրի իրականացման ծախսերի

Հ/Հ	Ծախսատեսակի անվանումը	Միավոր	քանակ	Միավորի արժեքը (դրամ)	Ընդամենը գումարը (հազար դրամ)
1	**Աշխատակազմի վարձատրություն** *(ներառյալ հարկերը)* *				**9295.0**
	ծրագրի հեղինակ և ղեկավար (1 մարդ, 11 ամիս)	մարդ/ամիս	11	200000	2200.0
	ֆինանսական համակարգող (1 մարդ, 11 ամիս)	մարդ/ամիս	11	135000	1485.0
	համակարգող (1 մարդ, 11 ամիս)	մարդ/ամիս	11	170000	1870.0
	երաժշտական գործիքների համակարգող (1 մարդ, 11 ամիս)	մարդ/ամիս	11	110000	1210.0
	օպերատոր (2 մարդ, 11 ամիս)	մարդ/ամիս	22	115000	2530.0
2	**ՀՀ մարզերի երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցների մանկավարժների և աշակերտների համար ուսումնա-մեթոդական օգնություն և դասալսումներ**				**17134.0**
	Մարզի մեթոդիստների վարձատրություն *(ներառյալ հարկերը)* * (10 մարդ, 9 ամիս) միջին	մարդ/ամիս	90	81278	7315.0
	Երևանի մեթոդիստների վարձատրություն *(ներառյալ հարկերը)* * (դաշնամուր, լարային, ժողովրդական գործիքներ, պար, գեղարվեստ, խմբավար, տեսաբան, փողային, վոկալ՝ 9 մարդ, 9 ամիս), միջին	մարդ/ամիս	81	86778	7029.0
	հրավիրված մանկավարժների վարձատրություն *(ներառյալ հարկերը)* * (միջին)	մարդ	48	58125	2790.0
3	**Հիմնադրամի մեթոդիստ-մանկավարժների և հրավիրյալ մասնագետների կեցություն և ճանապարհածախս մարզերում իրականացվող ուսումնամեթոդական աշխատանքների իրականացման համար** *(1-ին և 2-րդ կիսամյակներ)*				2572.0
3.1	***ՀՀ Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Արագածոտնի մարզեր***				***392.0***
	օրապահիկ՝ (7 մարդ, 1 օր, 4 մարզ, 2 անգամ)	մարդ/օր	56	5000	280.0
	ճանապարհածախս (7 մարդ, 4 մարզ, 4 անգամ, միջին)	մարդ	112	1000	112.0
3.2	***ՀՀ Գեղարքունիքի, Շիրակի, Տավուշի, Լոռու, Վայոց Ձորի մարզեր***				***1645.0***
	օրապահիկ՝ (7 մարդ, 2 օր, 5 մարզ, 2 անգամ)	մարդ/օր	140	5000	700.0
	գիշերավարձ՝ (7 մարդ, 2 օր, 5 մարզ, 2 անգամ)	մարդ/օր	140	5000	700.0
	ճանապարհածախս՝ (7 մարդ, 5 մարզ, 2 անգամ, միջին)	մարդ	70	3500	245.0
3.3	***ՀՀ Սյունիքի մարզ (Կապան,Մեղրի, Ագարակ) 1-ին կիսամյակ***				***385.0***
	օրապահիկ՝ 7 մարդ, 4 օր	մարդ/օր	28	5000	140.0
	գիշերավարձ՝ 7 մարդ, 3 օր, 5.0 հ. դ.	մարդ/օր	21	5000	105.0
	տրանսպորտային միջոցի վարձակալություն	հատ	1	140000	140.0

3.4	***ՀՀ Սյունիքի մարզ (Սիսիան,Գորիս) 2-րդ կիսամյակ***				***150.0***
	օրապահիկ՝ 5 մարդ, 3 օր	մարդ/օր	15	5000	75.0
	գիշերավարձ՝ 5 մարդ, 2 օր	մարդ/օր	10	5000	50.0
	ճանապարհածախս՝ (միջին)	մարդ	5	5000	25.0
4	**ՀՀ մարզերի դպրոցների՝ գեղարվեստի և պարարվեստի բաժինների ուսուցիչների համար ուսումնա-մեթոդական օգնություն և դասալսումների կազմակերպում առաջատար մասնագետների կողմից Երևան քաղաքում**				**1070.0**
	սնունդ՝ 30 մարդ, 5 օր	մարդ/օր	150	5000	750.0
	գիշերավարձ՝ 10 մարդ, 4 օր	մարդ/օր	40	5000	200.0
	ճանապարհածախս՝ (միջին)	մարդ	30	4000	120.0
5	Ուսումնա-մեթոդական և գործնական օգնության ծրագրի համակարգողների գործուղումներ մարզեր՝ կեցության և ճանապարհի ծախսեր՝ 2 մարդ, 10 մարզ, միջին՝ 10.31 հ. դ.	մարդ/մարզ	20	10310	**206.2**
6	Հաշվետվություն համերգային ձևաչափով դահլիճի վարձակալություն՝ 160.0 հ. դ. տպագրական աշխատանքներ՝ 60.0 հ. դ. -նկարահանում 2 խցիկով*70.0 հ. դ. -ճանապարհածախս՝ 200.0 հ.դ. ցուցահանդեսի ձևավորում՝ 25.0 հ.դ.	համերգ	1	515000	**515.0**
7	**Գրասենյակային ապրանքներ, համակարգչային ծառայություններ**				**60.0**
8	**Կապի և էլեկտրաէներգիայի ծախսեր** -հեռախոսի վարձ (ոոպեավճար)՝ 4 հեռախոս x 8.0 հ. դ. (միջին) x 12 ամիս = 384.0 հ. դ. -ինտերնետ ծառայության,ջեռուցման և էլ.էներգիայի վճար՝ 11 ամիս x 18.2 հ. դ.(միջին)= 200.0 հ. դ.			584000	**584.0**
	ԸՆԴԱՄԵՆԸ				**31,436.2**

***Ծախսերը պետք է իրականացվեն բացառապես ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
հ/հ 900011032928, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
_____ Հ.Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Մշակութային կրթության
աջակցության» հիմնադրամ
Երևան, Սայաթ-Նովայի 1ա
«ԱԳԲԱ բանկ» ԲԲԸ
հ/հ 22000335192500 0, հվհհ 01563263
Տնօրեն՝
_____ Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.

Հավելված N 3
«23» «01» 2024 թ.
N ՄՇԴ- 1 - 2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

Կատարող կազմակերպությունը _____

Ծրագրի անվանումը _____

NN	Նախահաշվի հոդվածը	Գումարը՝ համաձայն նախահաշվի (դրամով)	Փաստացի գումարը (դրամով)	Շեղումը նախահաշվի համեմատ (+- դրամով)	Հոդվածի ծախսը հավաստող փաստաթղթի անվանումը, համարը և ամսաթիվը
1					
2					
3					
	Ընդամենը				

«____» _____ 2024 թ.

Կատարող կազմակերպության ղեկավար

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Կատարող կազմակերպության
գլխավոր հաշվապահ
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

ՓԱՍՏԱԹՂԹԵՐՆ ԸՆԴՈՒՆԵՑ՝

ՀՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատու՝

_____ /_____/
(անուն-ազգանուն) (ստորագրություն)

Հավելված N 4
«23» «01» 2024 թ.
N ՄՇԴ-1 -2024 պայմանագրի

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն
Երևան,Կառավարական տուն 2
ՀՎՀՀ՝ 02698732

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Հասցե՝

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆՁՄԱՆ – ԸՆԴՈՒՆՄԱՆ

ք. Երևան

Պայմանագրի համարն ու կնքման ամսաթիվը N « » « » 2024 թ.

Պետական մարմին՝ ի դեմս ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գլխավոր քարտուղար _____,
(անուն ազգանուն)

և Կազմակերպությունը, ի դեմս _____ -ի տնօրեն
կազմակերպության անվանում

_____ի, հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ
(անուն ազգանուն)

բովանդակային վարչության « » « » 2024 թ.-ի եզրակացությունը, ինչպես նաև նախարարության հաշվապահական հաշվառման վարչության « » « » 2024 թ.-ի թիվ ե - ՄՇԴ- եզրակացությունը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին. Կազմակերպությունը պայմանագրի շրջանակներում իրականացրել է _____ միջոցառումը, իսկ Պետական մարմինն վճարել է դրա դիմաց՝ պայամանագրով սահմանված կարգով և չափով:

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարություն

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝

Գլխավոր քարտուղարի տեղակալ՝

ՀԱՎԵԼՎԱԾ N 5
«23» «01» 2024 թ.
N ՄՇԴ-1 -2024 պայմանագրի

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Կազմակերպության անվանումը՝ «Մշակութային կրթության աջակցության» հիմնադրամ

Բյուջետային ծախսերի գործառական դասակարգման՝

Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը	Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածը	«1198.Մշակութային և գեղագիտական դաստիարակության» ծրագիր «11001.Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ» միջոցառում												
		2024 թ. բյուջեից հատկացվող գումարը՝ այդ թվում ըստ ամիսների (աճողական)												
		I եռամսյակ			I կիսամյակ			9 ամիս			տարի			ԸՆԴԱՄԵՆԸ
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
Ընթացիկ դրամաշնորհներ	463900		2500.0	5000.0	8000.0	11000.0	14000.0	18330.0	22660.0	27000.0	28480.0	29960.0	31436.2	31436.2
ԸՆԴԱՄԵՆԸ			**2500.0**	**5000.0**	**8000.0**	**11000.0**	**14000.0**	**18330.0**	**22660.0**	**27000.0**	**28480.0**	**29960.0**	**31436.2**	**31436.2**

ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ՝
ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն
Երևան, Վ. Սարգսյան 3
Կառավարական տուն N 2
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
h/h 900011032928, հվհհ 02698732
Գլխավոր քարտուղար՝
Հ. Հակոբյան
(ստորագրություն)
Կ. Տ.

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ՝
«Մշակութային կրթության
աջակցության» հիմնադրամ
Երևան, Սայաթ-Նովայի 1ա
«ԱԳԲԱ բանկ» ԲԲԸ
h/h 220003351925000, հվհհ 01563263
Տնօրեն՝
Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ. Տ.